

ԱԺ մեծարգո՝ նախագահ,
հարգելի՛ տիկին նախարար,
գերաշնորհ հայրեր, հայրենակիցներ՝

Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովում տնտեսական հիմնախնդիրների քննարկումները 4 հիմնական ուղղություններ են ներառել՝ տնտեսության զարգացումներ և ներդրումներ, Հայաստանում զբոսաշրջության խթանումը որպես պատմության և մշակույթի ներկայացման արդյունավետ եղանակ, սփյուռքի գործարար և մասնագիտական ցանցերի հնարավորություններ, Հայաստան-Սփյուռք տնտեսական համագործակցության խթաններ:

Նշված նիստերում թվով 21 մասնակիցներ հանդես են եկել հիմնական զեկույցներով և շուրջ երկու տասնյակ մասնակիցներ ներկայացրել են հարակից զեկույցներ:

Հայաստանի տնտեսության զարգացումներ և ներդրումներ նիստի ընթացքում ներկայացվել են տնտեսության գրավիչ կողմերը և մատնանշվել առկա անելիքները:

Հայաստանը, պատմականորեն լինելով մետաքսի ճանապարհի խոշոր առևտրային երթուղիների խաչմերուկ, մշտապես ակտիվ է եղել միջազգային առևտրում: Հայաստանն այժմ էլ կարող է հնարավորություններ ստեղծել ներդրողների և տնտեսվարողների համար. առաջարկել առնվազն 800 միլիոն սպառող ունեցող շուկաների հասանելիություն՝ պայմանավորված ինչպես եվրասիական միության տնտեսական անդամակցությամբ, այնպես էլ Իրանի հետ սերտ և նախանշվող ավելի խորացող հարաբերություններով, ինչպես նաև Եվրամիության և ԱՄՆ-ի հետ առևտրի պարզեցված, արտոնյալ ռեժիմներով:

Ապագայում նախատեսվող անելիքների լույսի ներքո անդրադարձ է կատարվել երկրի աշխատուժին, դրա կատարելագործման հեռանկարներին՝ ընգծելով կրթական որակի բարձրացման և առավել մրցունակ գլոբալ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը: Հիշատակվել են բիզնես միջավայրի տարբեր համանիշներով ու համաթվերով չափելի նվաճումները և առկա խնդիրները: Հիմնական քննարկումները ծավալվել են հետևյալ հարցերի շուրջ՝ Սփյուռքի պոտենցիալ ներդրողներին տեղեկատվության հասցեական հասանելիություն, Հայաստանում ներդրումային ծրագրեր և ներդրումային հնարավորություններ, փոքր և միջին բիզնեսի համար գործող արտոնություններ, ԵԱՏՄ, ԵՄ և այլ շուկաներ արտահանման առավելություններ, ՀՀ օրենսդրություն և այլն: Մատնանշվել են Հայաստանում բարենպաստ բիզնես միջավայրի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրները և առաջարկվել են դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ տարբեր լուծումներ: Ներկայացվել է Հայաստանում Սփյուռքի գործարարների հնարավորությունը անդրսահմանային

շուկաներում, պետական վարչարարության շարունակական պարզեցման գերակայությունները:

«Հայաստանյան զբոսաշրջության խթանումը որպես պատմության և մշակույթի ներկայացման արդյունավետ եղանակ» նիստի ընթացքում կարևորվել է զբոսաշրջության նշանակությունը մշակույթի և պատմամշակութային ժառանգության պահպանման, զբոսաշրջության զարգացման և խթանման գործընթացում: Համաշխարհային զբոսաշրջությունը տարեկան մեկ միլիարդից ավելի այցելություններ ունի. Հայաստանում այդ թիվն ունի զարգացման միտում և առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Նիստի մասնակիցները համակարծիք էին, որ Հայաստանում բնագավառի զարգացումը շաղկապված է ժառանգության պահպանության, պատշաճ ներկայացման և զարգացման, ինչպես նաև մշակութային բազմազանության և միջմշակութային երկխոսության խթանման նպատակերով աշխատանքների իրականացման հետ: 2016 թ.-ին Հայաստան զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1 միլիոն 260 հազար կամ 2015 թ.-ի նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է շուրջ 6%-ով: Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստան ներգնա զբոսաշրջիկների թիվը 382 հազարից հասել է 1 միլիոն 260 հազարի և այս տարի ևս ունի զգալի աճի միտում:

Այս նիստում քննարկումների վեկտորն ուղղված էր՝ Սփյուռքում Հայաստանի և Հայաստանում զբոսաշրջության խթանման հնարավորություններին, Սփյուռքից զբոսաշրջային այցելությունների ավելացումներին՝ ի նպաստ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման և զարգացման: Մասնավորապես ընդգծվել է ֆոտոցուցահանդեսների, ֆիլմերի ցուցադրությունների և այլ միջոցառումների միջոցով՝ առողջապահական, առողջարանային, խոհանոցային, գիտական, արկածային, գինու և այլ տեսակի զբոսաշրջության զարգացումների վերաբերյալ տեղեկատվության տարածման կարևորությունը՝ միտված հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը և Սփյուռքի անմիջական ներգրավմամբ համահայկական միջոցառումների կազմակերպմանը:

«Հայաստանի զարգացման հիմնախնդիրները» ուղղության ներքո 3-րդ և 4-րդ նիստերը կազմակերպել են Հայաստանի առևտրային ցանցի հետ համատեղ և վերջիններիս ակտիվ աջակցությամբ: Մասնավորապես, *«Սփյուռքի գործարար և մասնագիտական ցանցերի հնարավորությունները»* և *«ՀՀ-Սփյուռք տնտեսական համագործակցություն խթանումը»* նիստերի ընթացքում ընդգծվել է տարբեր երկրներում ստեղծված հայկական առևտրաարդյունաբերական պալատների, գործարարների և մասնագիտական միությունների և կառույցների դերն ու նշանակությունը: Նման կառույցների հետ համագործակցությունը գլխավորապես ուղղված է Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման և գործարար կապերի ակտիվացմանը: Այս համատեքստում աշխարհասփյուռ հայկական բիզնես կազմակերպությունների և

առևտրաարդյունաբերական պալատների համար կարևորվել է ընդհանուր հարթակների ձևավորումը, փորձի փոխանակումը, մարդկային կարողությունների զարգացումը, տարբեր վայրերում՝ հատկապես Արցախում, փոխշահավետ ծրագրերի իրականացումը: Քննարկումները միտված են եղել հայկական գործարար աշխարհի սահմանների բացահայտմանը, ընդլայնմանը և ներուժի արդյունավետ օգտագործմանը: Մասնավորապես կարևորվել են Հայաստանի և Սփյուռքի գործարարների միջև համագործակցության և բիզնեսի ակտիվացման համատեղ նախաձեռնության իրականացման նպատակով անհրաժեշտ տվյալների շտեմարանների օգտագործման և ստեղծման հնարավորությունները:

Անցկացված 4 նիստերի ընթացքում մասնակիցները ներկայացրել են բազմաթիվ հարցադրումներ, ինչպես նաև հանդես են եկել բազում առաջարկություններով՝ ի նպաստ մեր տնտեսության զարգացման, ապագա Հայաստանի կառուցման: Մենք վճռական ենք նոր թափ հաղորդելու աշխարհասփյուռ հայերի ներուժի օգտագործմանը տարբեր բնագավառներում. քաղաքականության մշակման և իրականացման գործում պատասխանատվություն ստանձնել ցանկացող կարող ուժի ներգրավմանը բոլոր հնարավոր ֆորմատներով: Կարևոր է այս ոգևորությունը արդեն գործադրել կոնկրետ ծրագրերի իրականացման մեջ և մեր բոլոր նախարարությունները բաց են բազմազան առաջարկությունների և կոնկրետ ծրագրերի իրականացման համար: Բոլոր առաջարկությունները մանրամասն ներկայացված են, նրանք կմշակվեն և հուսով եմ, որ յուրաքանչյուր բարձրացված հարցադրում կստանա համարժեք պատասխան:

Շնորհակալություն և ևս մեկ անգամ, շնորհավորում եմ բոլորին արդյունավետ աշխատանքի համար:

Վաչե Գաբրիելյան
ՀՀ փոխվարչապետ,
ՀՀ միջազգային
տնտեսական
ինտեգրման և
բարեփոխումների
նախարար